ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՀայաստանիՀանրապետության Շիրակիմարզի Անիհամայնք
ՀայաստանիՀանրապետությանՇիրակի մարզ, քաղաքՄարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 457-Ա

31 օգոստոսի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՇԱԿ ՎԱԼՅԱՅԻ ՈՒՌՈՒՄՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետի, 62-րդ և 64-րդ կետերի դրույթներով. ***որոշում եմ՝***

Քանի որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վճռով (քաղաքացիական գործ թիվ ՇԴ3/0024/02/22) Արշակ Վալյայի Ուռումյանին Մարալիկ քաղաքի Հաղթանակի փողոց թիվ 15 հասցեում գտնվող բնակելի տունը ճանաչվել է նրա սեփականությունը, սակայն նշված հասցեով կա ևս նախկինում հասցեավորված գույք, ուստի Մարալիկ քաղաքի Հաղթանակի փողոց 15 հասցեում գտնվող բնակելի տունը վերահասցեավորել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Անի համայնք Մարալիկ քաղաք Հաղթանակի փողոց, թիվ 15/1 բնակելի տուն:

Հայաստանի Հանրապետության Շիրակի

մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան

2022 թվականի օգոստոսի 31
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 458-Ա

05 սեպտեմբերի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ (ՔԱՂԱՔ ՄԱՐԱԼԻԿ) ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՐԱԿԱԼԵԼՈՒ, ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 25-Ի N 444-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ սահմանված կարգի 28-րդ, 29-րդ կետի 1-ին ենթակետի և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ կետի 1-ին մասի դրույթներով, *որոշում եմ*՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող (քաղաք Մարալիկ) /կադաստրային ծածկագիր 08-003-0020-/ պատկանող հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Անի համայնք, Մարալիկ քաղաք, Հրանտ Շահինյան փողոց, թիվ 304/5 հողամաս:

2.ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2022 թվականի օգոստոսի 25-ի << Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը համարակալելու և հասցեավորելու մասին>> թիվ 444-Ա որոշումը:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի պարտականությունները կատարող՝ Մ. Դարբինյան

2022 թվականի սեպտեմբերի 05
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 459-Ա

05 սեպտեմբերի 2022 թվական

ԸՆԴԵՐՔԻ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ /ԲՆԱԿԱՎԱՅՐ՝ ԲԱԳՐԱՎԱՆ/ 7.90008 ՀԵԿՏԱՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՈՂԱՄԱՍԸ «ՍԱՐԺ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 83-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի» 73-րդ և 76-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2022 թվականի օգստոսի 22 -ի N 80-Ա որոշումը, հաշվի առնելով «ՍԱՐԺ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի 2022 թվականի օգոստոսի 4-ի թիվ 005 գրությունը՝ ընդերքի հետախուզական աշխատանքներ իրականացնելու նպատակով հողամաս տրամադրելու վերաբերյալ. ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությանը հանդիսացող /բնակավայր՝ Բագրավան/ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, ընդերքի օգտագործման հողամասերի գործառնական նշանակություն 08-022-0152-0017 կադաստրային ծածկագրով 7.90008 հեկտար հողամասը /Վկայական՝ N 13072022-08-0033/ ընդերքի հետախուզական աշխատանքներ իրականացնելու նպատակով վարձակալության իրավունքով 2 /երկու տարի/

ժամկետով, 80000 (ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տարեկան վարձավճարով օգտագործման տրամադրել «ՍԱՐԺ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (հետագայում՝ Ընկերություն) և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ընկերության հետ կնքել հողամասի հետախուզական աշխատանքներ կատարելու իրավունքի տրամադրման պայմանագիր:

2. Սույն որոշումից բխող իրավունքները ենթարկա են պետական գրանցման՝ ընկերության միջոցների հաշվին:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի պարտականությունները կատարող՝ Մ. Դարբինյան

2022 թվականի սեպտեմբերի 05
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 460-Ա

02 սեպտեմբերի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ /ՁՈՐԱԿԱՊ ԲՆԱԿԱՎԱՅՐ/ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 08-073-0032-0043 0.91471 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ, ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՏԱՎԱԶԴ ՌՈԲԵՐՏԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդված 1-ին մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 15-ի թիվ 68-Ա որոշումը և 2022 թվականի սեպտեմբերի 02-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանում կայացած հողամասի աճուրդով վաճառքի արդյունքների մասին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովի 2022 թվականի սեպտեմբերի 02-ի թիվ 10 արձանագրությունը. ***որոշում եմ***՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությանը հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության, կադաստրային ծածկագրով 08-073-0032-0043 0.91471 հեկտար հողամասը, 83500 /ութսուներեք հազար հինգ հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով վաճառել աճուրդի արդյունքում հաղթող ճանաչված մասնակից՝ քաղաքացի Արտավազդ Ռոբերտի Խաչատրյանին (AU0607872, տրված՝ 07.02.2017 թվական 022-ի կողմից, բնակության հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն գյուղ Ձորակապ 10-րդ փողոց, 3-րդ տուն):

2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր և պարտավորեցնել գնորդին՝ սահմանված կարգով և ժամկետում վճարել հողի արժեքը և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ենթարկել պետական գրանցման:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի պարտականությունները կատարող՝ Մ. Դարբինյան

2022 թվականի սեպտեմբերի 05
քաղաք Մարալիկ